



## ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ 2

### ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ

#### ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Ա-ն**, ունենալով օրենքով պահանջվող 20 տարվա համապատասխան աշխատանքային ստաժ, որից 18-ը մի տեսակի աշխատանք ենթադրող պաշտոնում աշխատած տարիներն են, իսկ 2-ը՝ մեկ այլ, դիմել է սոցիալական ծառայության պետական մարմին (այսուհետ՝ **Ծառայություն**)՝ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակելու խնդրանքով: **Ծառայությունը** մերժել է երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ **Ա-ի** դիմումը: Մերժման միակ հիմքը եղել է այն, որ 2-րդ պաշտոնում **Ա-ի** աշխատանքային 2 տարին **Ծառայությունը** չի համարել երկարամյա ծառայության ստաժ:

**Ա-ն** հայց է ներկայացրել վարչական դատարան, որով առաջադրել է 2 պահանջ՝

- 1) վերացնել **Ծառայության**՝ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի նշանակումը մերժելու վերաբերյալ որոշումը (վիճարկման հայց),
- 2) պարտավորեցնել **Ծառայությանը Ա-ին** նշանակել երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ (պարտավորեցման հայց):

Դատարանում իր շահերը ներկայացնելու համար **Ա-ն** նոտարական կարգով վավերացված լիազորագիր է տվել **Բ-ին**՝ վերալիազորման իրավունքով:

Դատարանը հայցն ընդունել է վարույթ և գործով նշանակել է նախնական դատական նիստ:

Նախնական դատական նիստին **Ա-ի** ներկայացուցիչ **Բ-ն** ներկայացել է **Գ-ի** հետ՝ նպատակ ունենալով օգտվել լիազորագրով իրեն տրված վերալիազորման իրավունքից և **Ա-ի** անունից հանդես գալու համար **Գ-ի** լիազորությունները հաստատել (վերալիազորել) դատարանի առջև՝ բանավոր սահմանելով դրանց ծավալը: Դատարանը թույլ չի տվել **Գ-ին** իրականացնել ներկայացուցչություն այն պատճառաբանությամբ, որ, առաջին՝ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնակարգման համաձայն, ներկայացուցչի լիազորությունները դատական նիստին կարող է հաստատվել միայն դատավարության կողմն այն դեպքում, երբ անձամբ է մասնակցում տվյալ դատական նիստին, այդպիսով միաժամանակ մերժելով **Բ-ի** այն փաստարկը, որ ներկայացուցիչները ստանձնում են լիազորագիրը տված անձի՝ որպես դատավարության մասնակցի, բոլոր, այդ թվում՝ դատարանի առջև լիազորությունները հաստատելու իրավունքները (Վարչ. դատ. օր.-ի 24-րդ հոդվածի 5-րդ մաս), և, երկրորդ՝ վերալիազորման կարգով տրված լիազորագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով:

Դատարանը նախնական դատական նիստի ընթացքում հայցվորին առաջարկել է հայցապահանջը ճշգրտել՝ հրաժարվել վիճարկման հայցապահանջից և ներկայացնել միայն պարտավորեցման հայցապահանջ: Հայցվորը համաձայնել է:

Հաջորդ նախնական դատական նիստում դատարանը բաշխել է ապացուցման բեռը հետևյալ կերպ՝ **Ծառայության** վրա է դրել հայցվող վարչական ակտի ընդունումը մերժելու հիմք հանդիսացած փաստերի ապացուցման պարտականությունը:

Մինչև գործի քննության ավարտը երկարամյա կենսաթոշակի նշանակման հետ կապված հարաբերությունները կարգավորվող օրենսդրությունը փոփոխության է ենթարկվել, և պահանջվող 20-ի փոխարեն սահմանվել է 22 տարվա աշխատանքային ստաժի առկայության պայմանը:



Գործի քննության ընթացքում պատասխանողը չի ներկայացրել հայցվող վարչական ակտի ընդունումը մերժելու հիմք հանդիսացած փաստերը հաստատող ապացույցներ:

Հիմք ընդունելով այն, որ վարչական դատավարությունում բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական (անբարենպաստ) հետևանքները կրում է այն ապացույցելու բեռը կրող կողմը՝ դատարանը, կիրառելով երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ հայցվորի դիմումը մերժելու դրությամբ գործող օրենքի կարգավորումները (երբ գործում էր 20 տարվա աշխատանքային ստաժի առկայության պայմանը) բավարարել է հայցապահանջը:

## ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

### Հարցադրում 1.

*Արդյո՞ք հիմնավոր էր տվյալ դեպքում թույլ չտալ Գ-ին իրականացնել ներկայացուցչություն: Հիմնավորե՞ք պատասխանը:*

### Հարցադրում 2.

*Արդյո՞ք հիմնավոր էր հայցապահանջը ճշգրտելու վերաբերյալ դատարանի առաջարկը: Հիմնավորե՞ք պատասխանը:*

### Հարցադրում 3.

*Արդյո՞ք Դատարանը ճիշտ էր բաշխել ապացուցման բեռը: Հիմնավորե՞ք պատասխանը, միաժամանակ անդրադառնալով այն հարցին, թե պարտավորեցման հայցի պարագայում այդ կերպով ապացուցման բեռի բաշխումն ի՞նչ հետևանքների կարող է հանգեցնել՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզելու դատարանի պարտականության կատարման իմաստով:*

### Հարցադրում 4.

*Արդյո՞ք Դատարանը ճիշտ էր որոշել կիրառվող օրենսդրությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործը քննվում է պարտավորեցման հայցի շրջանակներում: Հիմնավորե՞ք պատասխանը:*

### Հարցադրում 5.

*Համեմատելով տվյալ իրավական խնդրում և ստորև ներկայացված փաստական հանգամանքներում դատավորի գործողությունները՝ նշե՞ք նմանությունները և տարբերությունները: Հիմնավորե՞ք պատասխանը:*

## ՀԱՐՑԱԴՐՈՒՄ 5՝ ՓԱՏՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

(...) Դատարանը նախնական դատական նիստի ընթացքում հայցվորին առաջարկել է հայցապահանջը ճշգրտել՝ ներկայացնելով միայն պարտավորեցման պահանջ: Հայցվորը համաձայնել է: Հաջորդ նախնական դատական նիստում Դատարանը բաշխել է ապացուցման բեռը՝ Ծառայության վրա դնելով հայցվող վարչական ակտի ընդունումը մերժելու հիմք հանդիսացած փաստերի, իսկ հայցվորի վրա՝ իր



համար բարենպաստ վարչական ակտի ընդունումը հիմնավորող փաստերի ապացուցման պարտականությունը:

Հիմք ընդունելով այն, հանգամանքը, որ գործի քննության ընթացքում փոփոխության ենթարկված համապատասխան օրենքով ավելացվել է աշխատանքային ստաժի ցենզը և երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար 20 տարվա փոխարեն սահմանել է 22 տարվա աշխատանքային ստաժի առկայության պայմանը՝ դատարանը, կիրառելով դատական ակտի կայացման պահին գործող (փոփոխված՝ 22 տարվա աշխատանքային ստաժ նախատեսող) օրենքը, մերժել է պարտավորեցման հայցապահանջը՝ չնայած այն հանգամանքին, որ դատաքննության ընթացքում հայցվորը ապացուցել էր երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ իր դիմումը մերժելու դրությամբ երկարամյա ծառայության 20 տարվա ստաժի առկայության փաստը: